



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIocese of the Armenian Church of America, 630 Second Avenue, New York, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թիւ 29911

Օգոստոս 19, 1986

Արժանաշնորհ
Տ. Կիւրեղ Ա. Քհնյ. Գալֆայեան
Հովիւ Ս. Խաչ Եկեղեցւոյ
նիւ Եորթ.

Սիրելի Տէր Կիւրեղ,

Նկատի առնելով մեր թեմի հոգեւորականներէն ոմանց ինքնակամ արարքները, փոփոխութիւն մտցնելու մեր Եկեղեցւոյ ծիսական եւ կարգապահական սովորոյթներուն եւ աւանդութեանց մէջ, հետեւեալ հրահանգը կը յանձնենք ձեր լուրջ ուշադրութեան:

Կը հրահանգենք դադրեցնել պաշտամունքներու աւարտին աշխարհական անձանց քարոզի փոխարէն ``վկայութիւն տալու`` նորոյթը:

Նաեւ կը հրահանգենք դադրեցնել պաշտամունքներու ընթացքին կին մարդերու մոմակալութեան եւ այլ պաշտօններ տալը, բացի երգեցիկ դասին անդամութենէն եւ Հին Կտակարանի եւ Առաքելոց Թուղթերու ընթերցողութենէն:

Կ'ազդարարենք ձեզ զգուշանալ արարքներէ որոնք կրնան պարտաւորել մեզ կարգապահական ծանր որոշումներ առնելու:

Կը յանձնարարենք որ կարեւորութեամբ նկատի ունենաք վերոյիշեալները, ինչպէս նաեւ նախապէս տրուած հրահանգները, զորս այս կերպով ձեր ուշադրութեան յանձնել պարտաւորեցին մեզ՝ մեր թեմի հոգեւորականներէն ոմանց արարքները: Անոնց անձնապէս եւս զգուշացուցած ենք:

Կ'աղօթենք որ Տէրը իր իմաստութեամբ առաջնորդէ իր սուրբ Եկեղեցւոյ սպասաւորները:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թիւ 30155

Մարտ 17, 1987

Արժանաշնորհ
Տ. Կիւրեղ Ա. Քհնյ. Գալֆայեան
Հովիւ Ս. Խաչ Եկեղեցւոյ
Նախագահ ժխական Խորհուրդի
Նիւ Եորք.

Սիրելի Տէր Կիւրեղ,

Ստացած ենք Փետրուար 7, 1987 թուակիր ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ ձեր նախագահութեամբ Փետրուար 1ին գումարուած համայնքիդ ժխական ժողովին մէջ կատարուած է ժխական Խորհուրդի վեց անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով բուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք ժխական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հանցէք փութով Առաջնորդարան ղրկել ժխական Խորհուրդի նորընտիր ղիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Օրհնելով ժխական Խորհուրդի նոր կազմը, ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն կը մաղթենք յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐԷԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Տորթ. Անդրանիկ Հազարեան
Մուրատ Միքայէլեան
Գրիգոր Անուշեան
Յակոբ Ուրեան
Նորայր Ուրեան
Իլայ Պօղոսեան



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թի 30383
Մարտ 17, 1988

Արժանաշնորհ
Տ. Կիրեղ Ա. Քհնյ. Գալֆայեան
Հովի Ս. Խաչ Եկեղեցոյ
Նախագահ Ծխական Խորհուրդի
Նիւ Եորք.

Սիրելի Տէր Կիրեղ,

Ստացած ենք Փետրուար 19, 1988 թուակիր ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ ձեր նախագահութեամբ Փետրուար 7ին գումարուած համայնքիդ Ծխական Ժողովին մէջ կատարուած է Ծխական Խորհուրդի հինգ անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան ղրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Օրհնելով Ծխական Խորհուրդի նոր կազմը, ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն կը մաղթենք յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Զարլզ Կարապետեան
Ճէյմս Յարութիւնեան
Ռիչըրտ Յարութիւնեան
Երուանդ Բանդար
Երուանդ Գալայճօղլու



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թի 30490
Օգոստոս 1, 1988

Մեծայարգ
Տոբթ. Անդրանիկ Հազարեան
Ս. Խաչ Եկեղեցոյ
Ծխական Խորհուրդի Ատենապետ
Նիւ Եորք.

Յարգելի Տոբթ. Հազարեան,

Ինչպէս տեղեկացուցած ենք Ծխական Խորհուրդիդ, 1988 Օգոստոս 15էն սկսեալ, մասնակի ժամերով համայնքիդ հովիւ նշանակած ենք Արժշ. Տ. Տիրան Ա. ԲՅՆՅ. Փափագեանը:

Այս նշանակումը կատարած ենք հետեւեալ հասկացողութեամբ.

- ա-- Տէր Հայրը պաշտօնի կոչուած է մասնակի ժամերով, շաբաթը երեք օր.
- բ-- Տէր Հայրը, Օգոստոս 21էն մինչեւ Հոկտեմբեր 9, Եկեղեցոյդ մէջ Ս. Պատարագ պիտի մատուցանէ ամիսը երկու Կիրակի.
- գ-- Երկու Կիրակիէն բացի, Գ. եւ Դ. կիրակիներուն, եթէ կարգադրուի որ Ս. Խաչ Եկեղեցոյ մէջ պատարագէ, փոխանակ ուրիշ ծուխ մը այցելելու, Ծխական Խորհուրդդ պարտի այցելու հովիւի յատուկ ժամուց տալ Տէր Հօր՝ 125 (հարիւր քսանհինգ) տոլար.
- դ-- Տէր Հօր շաբաթը երեք օրուան ծառայութեան համար Ծխական Խորհուրդդ պիտի կատարէ շաբաթական 300 (երեք հարիւր) տոլարի յատկացում մը, որ կ'ընդգրկէ եկեղեցականաց թոշակի ամբողջական վճարումին մասնակի բաժինը.
- ե-- Տէր Հայրը իր պաշտօնին պիտի ձեռնարկէ 1988 Օգոստոս 16ին:

Ձեզի եւ Ծխական Խորհուրդիդ անդամներուն կը մաղթենք առաւել քաջառողջութիւն եւ ձեր եկեղեցանուէր աշխատանքներուն յաջողութիւն:

Սիրոյ ողջունի

ԹՈՐԳՈՍ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Օրինակ՝ Տ. Տիրան Ա. ԲՅՆՅ. Փափագեանի